ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«21» նոյեմբերի 2025 թվականի N: 675 ք. Գյումրի

2025-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ, ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ (ՏԵՂԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի դրույթներով, 2025–2026 թվականների ձմեռային ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում հնարավոր արտակարգ իրավիճակները կանխելու, ընդհանուր օգտագործման միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների անցանելիությունը, բնակչության պաշտպանությունն ու անվտանգ երթևեկությունն ապահովելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հանձնարարել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետին.

ա. մշտապես իրազեկ լինել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ճանապարհներին տիրող իրավիճակին և անհրաժեշտության դեպքում ճանապարհներն

սպասարկող կազմակերպությունների ուժերով և միջոցներով կազմակերպել բնակչության անվտանգ երթևեկությունը.

բ. ճանապարհներին տիրող իրավիճակի վերաբերյալ կազմակերպել տեղեկատվության փոխանակում շահագրգիռ ծառայությունների և կազմակերպությունների միջև.

գ. ստեղծված իրավիճակի և ձեռնարկված միջոցառումների մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին,

2) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին.

ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ եղանակային պայմանների վատթարացման դեպքում բնակչության պաշտպանության ուղղությամբ, իսկ իրավիճակի կտրուկ փոփոխման դեպքում անմիջապես տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին,

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակի հրամանատարին.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում առատ ձյան կամ ուժեղ ձնաբքի պատճառով դժվարանցանելի կամ անանցանելի ճանապարհներին հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու և մարդկանց կյանքի ու առողջության պաշտպանությունն ապահովելու նպատակով, ստեղծված իրավիճակից ելնելով ուժեղացնել հսկողությունը մարզի դժվարանցանելի ճանապարհներին և հնարավորինս զերծ պահել ազգաբնակչությանը երթևեկելուց,

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ճանապարհներն սպասարկող «Մերձմոսկովյան» բաց բաժնետիրական ընկերության, «Ճանշին» փակ բաժնետիրական ընկերության, «Աշոցքի ավտոտրանսպորտ և ճանապարհներ» փակ բաժնետիրական ընկերության, «Անիի ճանապարհների շինարարություն և շահագործում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեններին.

ա. մշտապես պատրաստ վիճակում պահել ճանապարհներն սպասարկող տեխնիկան, ուժերն ու միջոցները,

բ. տեղերում սահմանել շուրջօրյա հերթապահություն և ճանապարհներին տիրող իրավիճակի վերաբերյալ պարբերաբար տեղեկացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային

փրկարարական վարչության և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի Շիրակի մարզի օպերատիվ կառավարման կենտրոնի հերթապահներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն,

գ. եղանակային պայմանների վատթարացման դեպքում, ձեռնարկել միջոցառումներ ճանապարհների անցանելիությունն ապահովելու և անօգնական վիճակում հայտնված մարդկանց և տրանսպորտային միջոցները ժամանակավոր անվտանգ տարածք տեղափոխելու ուղղությամբ:

2. Առաջարկել.

1) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու և Արթիկի օդերևութաբանական կայանների պետերին, Աշոցքի և Ամասիայի օդերևութաբանական կայանների սպասարկողներին՝

եղանակի վերաբերյալ ներկայացնել ամենօրյա տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչություն, իսկ եղանակային փոփոխությունների վատթարացման կանխատեսումների վերաբերյալ՝ տեղեկացնել նախօրոք,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքների ղեկավարներին.

մշտապես պատրաստ վիճակում պահել համայնքային փրկարարական ուժերն ու ինժեներական տեխնիկան և անհրաժեշտության դեպքում ձեռնարկել օպերատիվ միջոցառումներ ավտոճանապարհներին անօգնական վիճակում հայտնված մարդկանց օգնելու, տրանսպորտային միջոցները ժամանակավոր անվտանգ տարածք տեղափոխելու և երթևեկությունը վերականգնելու համար:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետ՝ Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է